



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“15” փետրվարի 2012թ


№15 -Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Իրավական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.22-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» N1582-Ա որոշման 3-րդ կետի, **ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հաստատել արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնքների ղեկավարներին ստեղծել ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման համայնքային հանձնաժողովներ:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ


2012թ. փետրվարի 15  
ք. Կապան

## Կ Ա Ձ Մ

Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց  
պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի

- Ս. Խաչատրյան ՀՀ Սյունիքի մարզպետ (հանձնաժողովի նախագահ)
- Ա. Դոլունց ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ  
(հանձնաժողովի նախագահի տեղակալ)
- Ս. Ավետիսյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և  
ՀԳՄ վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)
- Ա. Հարությունյան Հայաստանի Հանրապետության փրկարար  
ծառայության Սյունիքի մարզային փրկարարական  
վարչության պետ (համաձայնությամբ)
- Ա. Ոստաբաշյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի  
քաղաքաշինության վարչության պետ
- Ս. Թանգյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի  
գյուղատնտեսության և բնապահպանության  
վարչության պետ
- Ա. Ծատրյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի  
առողջապահության և սոցիալական ապահովության  
վարչության պետ
- Մ. Կոստանդյան ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի  
հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային  
հողային պետական տեսչության պետ
- Ժ. Գևորգյան Սյունիքի մարզային հիդրոմետ ծառայության պետ  
(համաձայնությամբ)

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար



Ռ. Ղազարյան

**Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ**  
**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ**  
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող մարզային հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման ոլորտում (այսուհետ՝ ոլորտ) համակարգող խորհրդակցական մարմին:

2. Հանձնաժողովին հաշվետու են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» N 1582-Ն որոշմամբ սահմանված կարգով ստեղծված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի համայնքային հանձնաժողովները:

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

4. Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավվել հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների մասնագետներ ու փորձագետներ:

**II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

5. Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման բնագավառում պետական քաղաքականության իրականացման համար առաջարկությունների մշակումը:

2) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման միջոցառումները համակարգված ու օպերատիվ ապահովելու նպատակով առաջարկությունների ներկայացումը,

3) արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման և պետական աջակցության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

4) արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովների գործունեության համակարգումը:

### III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով:

7. Հանձնաժողովի նիստերը հիմնահարցերի վերաբերյալ անցկացվում են կիսամյակը մեկ, իսկ ընթացիկ հարցերի վերաբերյալ՝ ըստ դրանց առաջացման անհրաժեշտության:

8. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

9. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը:

10. Հանձնաժողովն իր նիստերի ընթացքում ընդունում է որոշումներ:

11. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած անդամների կեսից ավելի կողմ ձայներով:

12. Հանձնաժողովի որոշման վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք, որը կցվում է նիստի արձանագրությանը:

13. Հանձնաժողովն ունի քարտուղար, որը արձանագրում է հանձնաժողովի նիստերը և նախապատրաստում հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

### IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

14. Հանձնաժողովի նախագահը՝

1) իրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը: Իր բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահի լիազորությունների իրականացնում է հանձնաժողովի նախագահի տեղակալը.

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

### V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

15. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու հարցեր,

բ. ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

2) պարտավոր են՝

ա. մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին,

բ. կատարել հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները:

## VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ


16. Հանձնաժողովի քարտուղարը՝

- 1) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.
- 2) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում միջոցառումների իրականացումը, հանձնաժողովի նիստերի գումարման նախապատրաստական աշխատանքները.
- 3) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը.
- 4) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.
- 5) սահմանում է հսկողություն հանձնաժողովի որոշումների իրականացման նկատմամբ.
- 6) հանձնաժողովի նախագահին է ներկայացնում հաշվետվություն իրականացված աշխատանքների մասին.
- 7) կազմակերպում է արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները գնահատող համայնքային հանձնաժողովներից ստացվող նյութերի հավաքումը, մշակումը և ներկայացումը հանձնաժողովի քննարկմանը.
- 8) առաջարկություններ է ներկայացնում, ըստ ուղղությունների, աշխատանքային խմբերի ստեղծման վերաբերյալ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման ոլորտում ի հայտ եկած հրատապ խնդիրների լուծման, ինչպես նաև հիմնական խնդիրների իրականացման համար: Աշխատանքային խմբերի կազմը հաստատում է հանձնաժողովի նիստը կամ հանձնաժողովի նախագահը՝ հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում.
- 9) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ իրականացնում է այլ լիազորություններ:

## VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

17. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի որոշմամբ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի  
աշխատակազմի ղեկավար՝



Ռ. Ղազարյան